ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Նոյեմբերի 9-ին ձեռնադրված յոթ քահանաներ, ավարտելով 40-օրյա պահեցողության շրջանը և մատուցելով իրենց անդրանիկ Ս. Պատարագը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ ծառայության են կոչվել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերում և կառույցներում:

Տ. Ներսես քահանա Ղալայանը հոգևոր սպասավորության է կոչվել Գուգարաց թեմում, Տ. Տաթև քահանա Մարուքյանը և Տ. Արարատ քահանա Գումբալյանը՝ Վիրահայոց թեմում, Տ. Արշակ քահանա Նազարյանը՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում, Տ. Փառեն քահանա Առաքելյանը՝ Շիրակի թեմում, Տ. Եզնիկ քահանա Մալխասյանը՝ Արարատյան Հայրապետական թեմում, իսկ Տ. Արսեն քահանա Սարոյանը՝ ՀՀ Զինված ուժերում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ